

ԲՈՒՒԵԼ - ՀՈՏԻԼ

○ * ○

Մէկն Ամերիկայէն կը ինդրէք «Երկու հայերէն բառերու տարրերութիւններ, ու բոնց են հոտիլ և բորել. ըստ մեր կարծիքն հոտիլ՝ գէշ կը նշանակէ անպայման. իսկ բուրել՝ լաւ»:

Խնդիրն լուծումը պիտի տայ կարծիքէ աւելի ժողովրդեան լեզուն, զրաւոր կամ խօսուած: Պրապահնեց բանի մ'օրինակ:

Նախ բննենց այդ երկու բայերուն արմատները հոտ և բոյր, տեսնելու տարրերութիւնը. Հոտ = յն. ծոյնի կամ ծծմին = լո. օօօր: Ա. Գրոց և Ա. Հարց քով յայտնի է անոր իմաստը, այսինքն կը նշանակէ մարմիններէն զոլորչիացած կամ ծաւալած անտես մասնիկները որ ոռնզներուն հանդիպելով՝ զգալի կ'ըլլան ըստ այնմ որ ախորդելի են կամ զարշելի:

Հոտ՝ յինքեան չի նշանակեր ոչ ախորդելի և ոչ անախորդ, այլ է անտարրեր. հետեարար իմաստէն կամ ցովի ածականէն պէտք է իր բնութիւնն իմանալ:

Ահա Հոտ, պարզապէս, ախորդելի իմաստով. Առ զօտ հանդերձից նորա. Մնանդ. իլ. 27: — Առնուկ հոտ ի նմանէ (Խոռնկէ). Ելք. լ. 38: — Հոտ իւղոց քոց — հոտոյ իւղոց. Երգ. Ա. 2, 3: — Նարդոս ետ զնոտ իւր. Երգ. Ա. 12: — Հոտ կնդրկի ի վրանիք. Սիր. իդ. 21: — Հարէք հոտ և օքննեցէք երգ. Սիր. Լթ. 19: — Տունն լի եղն ի հոտոյ իւղոյն. Թովհ. Ժթ. 3. և այլն:

Գարշելի իմաստով. ի սեխոյ հոտոյ անտի Բ. Մակ. թ. 12: — Եւ ելցէ հոտ նոցա (Դիականց), Եսայի. Լթ. 3: — Ելցէ շարաւ նորա և բուրեցէ հոտ նորա. Ցովէլ. Բ. 20: — Գարշեցուցեր զհոտ մեր. Ելք. Ե. 21. և այլն:

Հոտի անտարրերութիւնը անկից ալ յայտնի է՝ որ կը գործածենք ախորդելիին համար Հոտ անոյշ — անուշից — անուշութեան — հոտ կինաց. և ի հակառակէն՝ հոտ զագիր, հոտ մահու, և բարդութիւնները՝ անուշանու, զարշանու. ինչպէս յունարէնն ալ ծծնին կը բարդէ, օճածնա և հակառակը ռահօծնա և գէշ իմաստի համար:

Թէպէտ բոյրի համար յայտնի օրինակներ հազուազիւս են, մահաւանդ Ա. Գրոց մէջ, սակայն հոմանիշը ըլլալով հոտին (Բուրաստան = Հոտարան, բուրութնաւէտ, հոտաւէտ) և ըլլալով արմատ բոյրելուն (ինչ որ պիտի տեսնենք թէ անտարրեր իմաստով է) կրնանց ըսել հաւանորէն, որ բոյր կամ բուրումն ալ անտարրեր են, ինչպէս. Մահու և կենաց երկառակնակ բուրումն. Նարեկ. — (Խոռնկը) Յետոյ արծարծմամբն ի բուրումն (անախորդ) փոխազդեցաւ, կիլմաց. Տես Հյկզ.¹:

ԲՈՒՒԵԼ - ՀՈՏԻԼ

Բուրելի, որուն հոմանիշն է դդիկի, ծաւալումն է հոտին ներգործական, կամ կրաւորական և կամ չէզոր իմաստով. ըստ այնմ որ կ'ըսենց թէ ծաղիկը մնոյց հոտ կը բուրէ. կամ չուշանէն անոյշ հոտ կը բուրէ և կամ «Բուրեցնցէ հոտ նորա», ինչպէս վերը տեսնենց չէզոր իմաստով. զրաբարի մէջ ներգործականին համար ունինք բուրեցնցանեմ ալ (Ցես Հայկազեան): Բուրեմն, բուրելը ցանի որ բղխումն է կամ ծաւալումը նիմիթի մը, և անտարրեր բաւ կամ գէշ իմաստով. բնական է, երբ մարտուր մարմին մ'է (Մաղիկ ևն.) անոյշ կը բուրէ, և երբ ապականած, աղտոտա՛ (Դիակ, նեխութիւն) գէշ կը բուրէ:

1. Հաս կը գործածուի և փոխարեւաբար երբեք նշմարտեան և երեսով. այսպէս հաս հրոյ, հոտ պատերազմի, ևն:

Տեսնենք բանի մ'օրինակ.

Բուրել՝ Անյշ իմաստով. Բուրեսցին ծնուց նորա իրեւ տաշտ խնկոց. Երգ. Դ. 16: — Բուրեն զանուշահոսութիւն Երգ. Ե. 18: — Իրեւ զմուռ ընտիր բուրեցի. Ալր. Խ. 21: — Որպէս կնդրուկ անուշահոտ բուրեցէք. Ալր. Լթ. 18. 4ն.։

Գարչելի իմաստով. Ելց շարաւ նորա և բուրեսց հոտ նորա Յովէլ Բ. 20: — Ծխաշունչ կծուռութիւն ինչ ի փորէ ի վեր բուրեցէ. Ասկ. Յովէ. Ա. 1: — Յորմէ բուրէ և բուրի սաստիկ ժանդահոտութիւն. Մանդակունի. և այլն։

Նոյնպէս անտարբեր են օտարազգի բառերը, ինչպէս քայլ կամ օտաշատ որոնց զիմաց նախնիք բղիւմ, կաթեցուցանեմ կը դնեն. այսպէս բղիւմ հոտ մահու կամ կենաց՝ նոյն է ընդ բուրել. (Եղիշէ)։

Կը մնայ Հոտիլը. թէպէտ Պ. Հ. Աճառեան իր «Հայերէն Գաւառական Բառարան» տին մէջ հոտիլն անտարբեր իմաստով կը զնէ. «Հոտիլ — հոտ ունենալ (լաւ կամ գէշ)» Պոլսոյ բարբառով, սակայն, ընդհանուր առումը ժողովրդեան ցով — ինչպէս նաև ցանի մը Ս. Գրոց օրինակներ —, հոտիլ, հոտած՝ պարզապէս առանց մակդիր՝ ապականած և գարշահու կը նշանակէ. Տէր արդ հոտեալ իցէ... Յովէ. ԺԱ. 39: — Նման է մեղաւորաց որ կայ ի տանն հոտեալ. Վրց. Հրց. Զ.: — Եւ մարմին յորժամ առնուցու՝ հոտէ. Ասկ. Յովէ. Ա. 24: — Մեռեալց յետ միոյ կամ երկուց առուրց՝ հոտին. Ասկ. Մ. Բ. 9: — Ի հոտեալ հողիդ ընդունիս (զԱստուած). Մանդ. Ա.։ — Նախատէին՝ զբերան ու.

նէլով հոտեալ. Ասկիփորիկ: — Ի պատմելոյ զաննառելիսն հոտեցաւ բերան. Ասկիփորիկ:

Հայկազեանն ալ միայն զազիր իմաստին կողմէ է և հակառակին համար օրինակ չունի։

Մարուր և ախորժելի իմաստով օրինակներ կը պակսին. բայց մէկը կրնայ առարկել թէ զրաբարի մէջ այդ է իմաստը, իսկ աշխարհաբարի մէջ երկու իմաստով ալ կրնայ զործածուկը, ինչպէս Աճառեան «Լաւ կամ գէշ հոտ ունենալ». սակայն կրկին զիսել կ'արժէ որ զր. հոտեալ և աշխարհաբար հոտած (թէ ածական և թէ անցեալ զերբայ) միշտ գէշ հոտելու նշանակութիւնն ունի: Եղակացնելով՝ կ'ունենանք բոյր և հոտ հոմանիշ և նշանակութեան համեմատ անտարբեր՝ ախորժելիի կամ անախորժի համար. և հոտի՝ գէշ իմաստով։

Լեզուական օրինակներէն նետեցուցած եղակացութեան վլայ աւելցնենց նաև մեր կարծիքը՝ բուրել և հոտիլ բայկրու մասին. ըստ մեզ ուրեմն բուրել կը նշանակէ ծաւալումն ամէն մարմնի բնածին հոտին, ախորժելի կամ անախորժ. իսկ հոտիլ՝ միշտ կ'ենթաղրէ տարրալուծութիւն կամ բազազութիւն, և ըստ այսմ ապականութիւն, նեխութիւն, փոտոթիւն։

Հոտիլի մասին ըստծնիս պարզ է և տարակոյս չի մնար բնաւ. բայց բոյրեն արդի զրականութեան և բմրոնումին մէջ արդէն սկսեր է հակիլ բկ լաւ և ախորժելիին, հակառակ զրաբարի անտարբերութեան՝ զոր վերը տեսանց. Երեւոյթը զիւրաւ կը մեկնուի. արդէն զր. շատ բառեր կրկին կամ աւելի իմաստով՝ աշխ.ի մէջ մէկ նշանակութեան յատկացած են։

Հ. Եղիշ Փէտրիննան

1. Էմինեան ազգագրական ժողովածու. Հա. Թ. էջ. 671. ապ. Թէֆէլս. 1913.